

CERD/C/ARM/CO/5-6



**Միջազգային համագումար
ռասայական բռնության
խտրականությունների
վերացման վերաբերյալ**

Distr.: General
4 April 2011
Russian
Original: English

Ռասայական խտրականության վերացման հռչակագիր
Յոթանասունութերորդ նիստ
2011 թվականի փետրվարի 14- մարտի 11

Մասնակից-պետությունների կողմից
ներկայացված զեկույցների դիտարկում
Հռչակագրի 9-րդ հոդվածի
համապատասխան

Ռասայական խտրականության վերացման
Հանձնաժողովի վերջնական դիտողությունները

Հայաստան

1. 2011 թ.-ի փետրվարի 28-ին և 2011 թ.-ի մարտի 1-ին կայացած իր 2071-րդ և 2072-րդ նիստերի ժամանակ (CERD/C/SR.2071 և CERD/C/SR.2072) հանձնաժողովը դիտարկել է Հայաստանի հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցները (CERD/C/APM/5-6)՝ ներկայացված մեկ փաստաթղթի մեջ: 2011 թ.-ի մարտի 10-ին կայացած իր 2086-րդ նիստում Հանձնաժողովն ընդունել է վարը նշված եզրակացություններն ու դիտողությունները:

Ա. Ներածություն

2. Հանձնաժողովը ողջունում է մասնակից-պետության զեկույցը, որը համապատասխանում է զեկույցների ներկայացմանը վերաբերող Հանձնաժողովի ղեկավարող սկզբունքներին, ինչպես նաև պատվիրակության կողմից բանավոր կերպով ներկայացված հավելյալ տեղեկատվությունը: Հանձնաժողովը նաև ողջունում է մասնակից-պետությունների միջև երկխոսության վերականգնումը և հուսադրող է համարում երկխոսության ժամանակ առաջացած հարցերի և դիտողությունների անկեղծ և կառուցողական պատասխանները:

Բ. Դրական ասպեկտները

3. Հանձնաժողովը ողջունում է ռասայական խտրականության դեմ պայքարի և նրա՝ ազգաբնակչության տարբեր էթնիկ ու ազգային խմբերի միջև փոխըմբռնման և հանդուրժողականության օժանդակմանն ուղղված օրենսդիր, ինստիտուցիոնալ և այլ միջոցները՝ ընդունված մասնակից պետության կողմից՝ 2002 թվականին մասնակից-պետության միավորված երրորդ և չորրորդ զեկույցների դիտարկման ժամանակվանից ի վեր:

Մասնավորապես նա հետաքրքրությամբ նշում է.

ա) Սահմանադրությամբ նախատեսված խտրականության արգելումը, մասնավորապես հետևյալ նշաններով՝ սեռային, մաշկի գույնի, էթնիկ ծագման, գենետիկ և անձնական բնույթի հանգամանքների;

բ) ռասսայական խտրականության վրա արգելքի ներառում հասարակության կյանքի տարբեր կողմերը կարգավորող մի շարք օրենքներում, ինչպես օրինակ Հեռուստատեսության և Ռադիոյի մասին Օրենքը;

գ) Քրեական օրենսգրքի դիրքորոշումը, համաձայն որի պատժի և պատասխանատվության աստիճանը որոշելիս հանցագործության էթնիկ և ռասսայական շարժառիթները դիտարկվում են որպես ծանրացուցիչ հանգամանքներ;

դ) ազգային փոքրամասնությունների հետ երկխոսության և խորհրդատվությունների տարբեր մեխանիզմների ստեղծում, այնպիսիք, ինչպես ազգային-մշակութային միավորումների գործունեության հարցերով Համակարգման խորհուրդ և Հասարակական խորհրդի փոքրամասնությունների հարցերով Հանձնաժողով, և ազգային ու կրոնական փոքրամասնությունների հարցերով Վարչության սահմանում, որը, մասնավորապես, կյանքի է կոչում ազգային փոքրամասնությունների հարցերով կառավարության քաղաքականությունը;

ե) մասնակից-պետության ջանքերը՝ ուղղված ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը, տարածմանն ու զարգացմանն օժանդակելուն և փոքրամասնությունների լեզուն և գրականությունը ուսումնասիրելուն;

զ) մարդու իրավունքների հարցերի ներառում, հարցեր, որ վերաբերում են խտրականությանն ու անհանդուրժողականությանը, ինչպես նաև հարցեր՝ կապված ազգային և ռասսայական փոքրամասնությունների հետ, շարունակական և ֆորմալ կրթության ծրագրեր՝ նախատեսված ուստիականության համար;

4. Հանձնաժողովը ողջունում է 2004 թվականին մարդու իրավունքների Պաշտպանի ինստիտուտի սահմանումը, որն ամբողջովին համաձայնեցվում է Փարիզյան սկզբունքների հետ և օժտված է մարդու իրավունքների Համագումարում ամրագրված խախտումներին վերաբերող բողոքները դիտարկելու մանդատով:

5. Հանձնաժողովը իր ակտիվ դերի համար արժանին է մատուցում մասնակից-պետությանը՝ կապված Դուրբանյան գիտաժողովի և Դուրբանյան գործընթացի վերանայման հարցով գիտաժողովի նախապատրաստական աշխատանքի անցկացման հետ:

6. Հանձնաժողովը ողջունում է մասնակից-պետության կողմից 2010 թվականին հաշմանդամների իրավունքների մասին Կոնվենցիային և 2005 թվականին երեխայի իրավունքների մասին Կոնվենցիային, 2006 թվականին խոշտանգումների դեմ Կոնվենցիային և 2006 թվականին կանանց նկատմամբ բոլոր տիպի խտրականությունների վերացման Կոնվենցիային կից Ֆակուլտատիվ արձանագրությունների վավերացումը:

7. Հանձնաժողովը նաև ողջունում է մասնակից-պետության կողմից Եվրոպական Խորհրդի և Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ընդունված ռասսայական խտրականության արգելքի մասին պայմանագրերի վավերացումը:

Գ. Մտահոգություն առաջացնող հարցեր և առաջարկներ

8. Ի գիտություն ընդունելով, որ մասնակից-պետության Սահմանադրությունը ներքին օրենքների համեմատությամբ առավելություն է տալիս միջազգային պայմանագրերին, և որ, համաձայն մասնակից-պետության հայտարարության՝ միջազգային պայմանագրերի դիրքն օգտագործվում է դատարաններում, Հանձնաժողովը միաժամանակ նախկինի պես մտահոգ է հետևյալով. քանի որ Կոնվենցիայի շատ կետեր ուղղակիորեն կիրառվում են դատարաններում, մասնակից-պետության օրենսդրությունը թույլ չի տալիս ամբողջ ծավալով ապահովել Կոնվենցիայի բոլոր հոդվածների կիրառումը:

Հանձնաժողովը մասնակից-պետության ուշադրությունը հատկապես հրավիրում է ռասսայական խտրականության պրոպագանդայով և դրա խթանմամբ զբաղվող կազմակերպությունների օրենսդրական արգելքի բացակայության վրա, ինչպես դա պահանջվում է Համաժողովի 4 հոդվածի բ) կետին համապատասխան: Բացի դրանից՝ Հանձնաժողովը ափսոսանք է հայտնում այն առնչությամբ, որ իրեն ռասսայական զատմանը վերաբերող օրենսդրական դրույթների մասին տեղեկատվություն չի տրամադրվել (2, 3 և 4 հոդվածներ):

Հանձնաժողովը մասնակից-պետություններին վճռականորեն կոչ է անում շարունակել իր օրենսդրությունը Կոնվենցիային համապատասխանեցնելու գործընթացը և մասնակից-պետություններին խնդրում է պարբերական հաջորդ զեկույցի մեջ ներառել օրենքից համապատասխան բացահայտումները՝ Կոնվենցիայի 3 և 4 հոդվածներում արգելված գործունեությանը վերաբերող, ինչպես նաև տվյալ հարցով դատական ցանկացած որոշումների մասին տեղեկատվությունը:

Բացի դրանից, Հանձնաժողովը մասնակից-պետությանը խորհուրդ է տալիս ակտիվացնել ջանքերը՝ ուղղված ռասսայական խտրականության դեմ պայքարի մասին վերջին տարիներին ընդունված օրենքների արդյունավետ կիրառումն ապահովելուն, և հետևել, որ դրանք հասնեն այն նպատակներին, որոնց հասնելու համար դրանք հենց ընդունվել են:

9. Հանձնաժողովը նշում է հաշվետու ժամանակաշրջանում դատարաններին և իշխանության համապատասխան մարմիններին ուղղված բողոքների բացակայությունը՝ կապված ռասսայական խտրականության ակտերի հետ(հոդված 6):

Վկայակոչելով քրեական արդարադատության համակարգի գործելու և դրա վարչարարության մասին իր ընդհանուր № 31 (2005) հանձնարարականը՝ Հանձնաժողովը հիշեցնում է այն մասին, որ ռասսայական խտրականության հետ կապված բողոքների բացակայությունը չի կարող ռասսիզմի կամ ռասսայական խտրականության բացակայության վկայությունը լինել և որ դա կարող է իրենց իրավունքների մասին զոհերի չիմացության, վրեժից վախի, իրավական պաշտպանության միջոցների նկատմամբ զոհերի արդյունավետ մուտքը սահմանափակող դատական գործընթացների բարդության, դատական մարմինների նկատմամբ անվստահության կամ էլ իրավասու իշխանությունների կողմից դատական հետապնդում սահմանելու դժկամության հետևանք լինել:

Այդ պատճառով Հանձնաժողովը մասնակից-պետություններին կոչ է անում.

ա) բարձրացնել ողջ ազգաբնակչության, մասնավորապես փոքրամասնությունների իրազեկությունն այն մասին, թե որն է ռասսայական խտրականությունը, ինչպես է այն սահմանված Կոնվենցիայի 1 հոդվածում և մասնակից-պետության Սահմանադրության մեջ;

բ) օրենսդրության, ռասսայական խտրականության և իրավական պաշտպանության առկա հնարավորությունների մասին տեղեկատվություն տրամադրել ազգաբնակչությանը, հատկապես խոցելի խմբերին, ինչպիսիք են՝ փոքրամասնությունները, ոչ քաղաքացիները, փախստականները, ապաստարան խնդրողները;

գ) հաշվի առնելով ռասսայական խտրականության գործերում պահանջների հիմնավորման բարդությունները՝ դիտարկել մասնակից-պետության օրենսդրությունում ապացույցի կանոնների վերանայման հնարավորությունը, որպեսզի փոխեն ապացուցման բեռը կրող կողմը կամ էլ մասնատել տվյալ բեռը այն դեպքերի համար, երբ ռասսայական խտրականության հետ կապված բողոքները հանդիսանում են քաղաքացիական վարույթի առարկա:

Հանձնաժողովը խնդրում է մասնակից-պետություններին հաջորդ

պարբերական զեկույցում ներկայացնել ռասսայական խտրականության ակտերի հետ կապված բողոքների և քրեական, քաղաքացիական կամ վարչական դատարաններում վարույթների արդյունքում ընդունված համապատասխան որոշումների մասին թարմացված տեղեկատվություն:

10. Հաշվի առնելով մասնակից-պետության ազգաբնակչության համեմատաբար միատարր կազմը՝ Հանձնաժողովը դրա հետ մեկտեղ ափսոսում է ազգաբնակչության փաստացի քանակի մասին հուսալի տվյալների բացակայության առնչությամբ:

Հանձնաժողովը խնդրում է մասնակից պետությանը 2011 թվականին նախատեսված մարդահամարի արդյունքներով և հաշվի առնելով ինքնաքննության սկզբունքը՝ իր հաջորդ պարբերական զեկույցի մեջ ներառել բնակչության կազմի վերաբերյալ թարմացված տվյալներ, ներառյալ ասորիներին, ադրբեջանցիներին, գնչուներին և այլ մանր էթնիկ խմբեր: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը մասնակից-պետության ուշադրությունը հրավիրում է զեկույցների պատրաստմանը վերաբերող Հանձնաժողովի ուղեցույց սկզբունքների 11 և 12 կետերի (CERD/C/2007/1) և իր ընդհանուր № 4 (1973) և № 24 (1999) առաջարկությունների վրա, համապատասխանաբար բնակչության ժողովրդագրական կազմի և տարբեր ռասսաներին և ազգային-էթնիկ խմբերին պատկանող անձանց մասին տվյալների տրամադրման մասին: Հանձնաժողովը հաջորդիվ խնդրում է տվյալներ տրամադրել նման խմբերի կազմում կանանց մասին:

11. Հանձնաժողովը ափսոսանք է հայտնում, որ մասնակից-պետության զեկույցում և երկխոսության ընթացքում քիչ տեղեկատվություն է տրվել փախստականների և ներքին տեղափոխման ենթարկված անձանց մասին՝ չնայած նրան, որ Անդրկովկասում քաղաքական իրավիճակի պատճառով մասնակից-պետությունում մեծ թվով փոխստականներ են հայտնվել և ձևավորվել է ներքին տեղափոխման ենթարկված բազմաքանակ խումբ (հոդված 5):

Հանձնաժողովը կոչ է անում մասնակից-պետությանը հաջորդ պարբերական զեկույցի մեջ ներառել փախստականների և իր տարածքում ներքին տեղափոխման ենթարկված անձանց դրության մասին մանրամասն տեղեկատվություն, հատկապես կապված իրավունքների արդյունավետ իրականացման հետ համաձայն Կոնվենցիայի 5 հոդվածի, ներառյալ բնակարանային ապահովման խնդրի վերաբերյալ թարմացված տեղեկատվությունը:

12. Ի գիտություն ընդունելով իրավական դրույթների վերաբերյալ զեկույցում ներառված լայնածավալ ինֆորմացիան՝ երաշխավորող

Կոնվենցիայի 5 հոդվածով նախատեսված իրավունքների ոչ խտրական իրականացումը, Հանձնաժողովը միևնույն ժամանակ ափսոսանք է հայտնում փաստացի իրավիճակի մասին ապագրեգացված տվյալների բացակայության առիթով: Միևնույն ժամանակ կոմիտեն ափսոսանք է հայտնում Կոնվենցիայով նախատեսված ազգային փոքրամասնությունների և ոչ քաղաքացիների իրավունքների պաշտպանության փաստացի իրավիճակի վերաբերյալ մանրամասն տվյալների բացակայության կապակցությամբ, քանի որ առանց այդ տվյալների դժվար է գնահատել մասնակից-պետությունում տարբեր խմբերի սոցիալ-տնտեսական վիճակը (հոդ. 1 և 5):

Հիշեցնելով ազգաբնակչության տարբեր խմբերի սոցիալ-տնտեսական դրության մասին ճշգրիտ և թարմ իմֆորմացիայի մեծ նշանակության մասին՝ հասկանալու համար բոլոր էթնիկ խմբերի և այլ խոցելի խմբերի իրական դրությունը և բացահայտելու համար անուղղակի խտրականության իրավիճակները, Հանձնաժողովը կոչ է անում մասնակից-պետությանը տվյալներ տրամադրել բոլոր էթնիկ և խոցելի խմբերի դրության մասին, ներառյալ ոչ քաղաքացիներին՝ հաշվի առնելով Հանձնաժողովի № 30 (2009) ընդհանուր առաջարկությունները, որ վերաբերվում են ոչ քաղաքացիներին. հիմնականում զբաղվածության, կրթության և տան ոլորտում ոչ քաղաքացիների դրության մասին:

Հանձնաժողովը նաև խնդրում է մասնակից-պետությանը իր զեկույցի մեջ ներառել տեղեկատվություն հատուկ միջոցների մասին՝ ընդունված ոչ բարենպաստ իրավիճակում գտնվող ցանկացած խմբին հավասար սկզբունքներով Կոնվենցիայի 5 հոդվածով նախատեսված իրավունքներից օգտվելու հնարավորությամբ ապահովելու նպատակով: Հանձնաժողովը մասնակից-պետության ուշադրությունը հրավիրում է Միջազգակին համաժողովի համապատասխանությամբ ռասսայական բոլոր տիպի խտրականությունների վերացման մասին հատուկ միջոցների կիրառման ոլորտի և հասկացության մասին իր ընդհանուր № 32 (2009) առաջարկության վրա:

13. Հետաքրքրությամբ նշելով փոքրամասնությունների հետ երկխոսությանն օժանդակելու տարբեր մեխանիզմների ստեղծումը՝ Հանձնաժողովը նախկինի պես մտահոգ է, որ այդ մեխանիզմները կրում են խորհրդատվական բնույթ և չեն կարող փոխարինել հասարակական կյանքում փոքրամասնությունների մասնակցությանը: Հանձնաժողովը հաջորդիվ ափսոսանք է հայտնում պետական ընտրովի մարմիններում փոքրամասնությունների ներկայացվածության մասին տեղեկատվության բացակայության հետ կապված (հոդվածներ 2 և 5):

Հենվելով այս ոլորտում արդյունքի հասնելու մասնակից-

պետության պարտավորվածության վրա՝ Հանձնաժողովն այն կարծիքին է, որ ընտրված լինելու հավասար իրավունքի իրավական երաշխիքները բավարար չեն նրանում, ինչ վերաբերում է փոքրամասնության մասնակցությանը քաղաքական կյանքին և վերստին հիշեցնում է, իր առաջարկության մասին՝ համաձայն որի մասնակից-պետությանը հարկավոր է Ազգային ժողովում և պետական այլ մարմիններում ապահովել փոքրամասնությունների պատշաճ ներկայացվածությունը (Ա/57/18, կետ 278), այդ թվում հատուկ միջոցների ընդունման հաշվին:

14. Հանձնաժողովը մտահոգվածությամբ նշում է մասնակից-պետությունում մասնակից-պետության տարածքից որոշ էթնիկ խմբերի վտարումը կոչ անող քաղաքական կազմակերպության գոյությունը: Հանձնաժողովը նաև ի գիտություն է ընդունում տվյալ կազմակերպության առաջնորդի նկատմամբ ընդունված իրավական միջոցների մասին մասնակից-պետության կողմից տրամադրված տեղեկատվությունը (հոդված 4):

Հանձնաժողովը մասնակից-պետությանը վճռականորեն կոչ է անում կատարել իր պարտավորվածությունը՝ ռասսայական խտրականությունը խրախուսող կամ դրդող ցանկացած կազմակերպության արգելքին վերաբերող, ինչպես դա նախատեսված է Համաժողովի 4 հոդվածի բ) կետով:

15. Արժանին մատուցելով մասնակից-պետության՝ կրթության ոլորտում ազգային փոքրամասնությունների շահերից բխող գործադրած ջանքերին՝ ներառյալ իրենց հարազատ լեզվով կրթությունն ու մայրենի լեզվի ու գրականության ուսումնասիրման դասընթացները՝ Հանձնաժողովը դրա հետ մեկտեղ ափսոսանք է հայտնում այն առիթով, որ կրթության իրավունքի արդյունավետ կիրառումը ազգային փոքրամասնությունների և խոցելի այլ խմբերին պատկանող՝ այնպիսին, ինչպես փախստականներն ու ապաստարան խնդրողները, բոլոր երեխաների համար երաշխավորված չէ, և որ նրանցից միայն շատ քչերն են հասնում բարձրագույն կրթության մակարդակին՝ չնայած այնպիսի միջոցների ընդունմանը, ինչպես բարձրագույն ուսումնական հաստատությունում առավելապես ազգային փոքրամասնությունների շարքից ընդունելության քննությունները հաջող հանձնած թեկնածուների ընդգրկումը (հոդված 5):

Համաժողովը մասնակից-պետությանը վճռականորեն խորհուրդ է տալիս ակտիվացնել կրթության հնարավորության արդյունավետ ապահովմանն ուղղված ջանքերը և մասնակից-պետությանը կոչ է անում.

ա) ընդլայնել ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցների տիպային ուսումնական ծրագրի կիրառումը և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների թվից ուսուցիչների

նախապատրաստումը;

բ) դիտարկել փոքրամասնությունների կոմպակտ բնակության շրջաններում նախադպրոցական կրթության մակարդակով լեզվի ուսումնասիրմանը օգնություն ցուցաբերելու հնարավորությունը՝ հեշտացնելու համար փոքրամասնությունների թվից աշակերտների ինտեգրացումը կրթության հիմնական համակարգ:

գ) ավելացնել ջանքերը ազգային փոքրամասնություններին և այլ խոցելի խմբերին պատկանող երեխաների՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություններն ընդլայնելու համար:

16. Հանձնաժողովը մտահոգվածությամբ նշում է, որ չնայած այն բանին, որ մասնակից-պետությունը գիտակցում է եզդիական և քրդական համայնքներում տղամարդկանց և կանաց ու մեծահասակների և երեխաների միջև հարաբերությունները պայմանավորող պահպանողական սովորույթների գոյությունը, սովորույթներ, որոնք խոչընդոտում են իրավունքների հավասար իրացմանն ու կիրառմանը, ազգային փոքրամասնությունների շահերից բխող նրա ծրագրերն ու միջոցառումները չեն օգնել լուծել տվյալ խնդիրները (հոդված 5):

Հիշեցնելով մարդու իրավունքների իրականացման գործում բոլորին հավասարություն երաշխավորելու մասնակից-պետության պարտավորվածության մասին՝ Հանձնաժողովը մասնակից-պետությանը կոչ է անում ազգային փոքրամասնությունների հետ իր աշխատանքում հաշվի առնել այդպիսի խտրական սովորույթներից հրաժարվել հասնելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, Հանձնաժողովը մասնակից-պետությանը կոչ է անում գենդերային քաղաքականության իր հայեցակարգի մշակման ժամանակ հաշվի առնել երկակի խտրականությունը, որոնց բխվում են փոքրամասնությունների թվից կանայք: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը մասնակից-պետության ուշադրությունը հրավիրում է ռասսայական խտրականության գենդերային չափման մասին իր ընդհանուր № 25 (2000) առաջարկությունների վրա:

17. Հանձնաժողովը ի գիտություն է ընդունում մասնակից-պետության մարդու իրավունքների Պաշտպանի և զանգվածային լրատվության միջոցների հաղորդագրությունները ռասսայական հենքի վրա միջադեպերի մասին: Հանձնաժողովը հաջորդիվ նշում է, որ օտարերկրացիների վերաբերությամբ բնակչության մեջ շրջանառվող կասկածամտությունը կարող է այլատյաց տրամադրվածությունների և նախապաշարմունքների գոյության նախանշան հանդիսանալ (հոդված 7):

Հանձնաժողովը մասնակից-պետությանը կոչ է անում պահպանել զգոնություն՝ ռասսայական հենքի վրա որևէ միջադեպ թույլ չտալու համար, և այսուհետ իրականացնում է առանձին անձանց ու խմբերի

վերաբերությամբ խտրականության ցանկացած դրսևորման դեմ պայքարի նպատակ ունեցող քաղաքականություն: Հանձնաժողովը նաև կոչ է անում մասնակից-պետությանը նախազգուշական միջոցներ ձեռնարկել, այդ թվում օտարերկրացիների նկատմամբ իր բնակչության վերաբերմունքի մասին հետազոտություն անցկացնելու և հանդուրժողականության, փոխըմբռնման և տարբերությունները հարգելու ոգով հասարակության լայն շերտերի դաստիարակության միջոցով: Այդ կապակցությամբ նշելով, որ մարդու իրավունքների հարցերով լուսաբանումն արդեն ներառված է դպրոցների ուսումնական ծրագրում, Հանձնաժողովը մասնակից-պետությանը խորհուրդ է տալիս մարդու իրավունքների մասին գիտելիքների տարածման գործում հատուկ ուշադրություն հատկացնել զանգվածային լրատվության միջոցների դերին:

18. Հանձնաժողովը մասնակից-պետությանը խորհուրդ է տալիս մարդու իրավունքների պաշտպանության հարցերով ազգային ծրագրերը մշակելիս և իրականացնելիս ի գիտություն ընդունել 2001 թվականի սեպտեմբերին ռասսիզմի, ռասսայական խտրականության, այլատյացության և դրանից բխող անհանդուրժողականության դեմ պայքարի Համաշխարհային համաժողովի կողմից ընդունված Դուրբանյան հռչակագիրը և գործողությունների Ծրագիրը և 2009 թվականի ապրիլին Ժնևում կայացած Դուրբանյան գործընթացի վերանայման հարցով Գիտաժողովի Եզրափակիչ փաստաթուղթը: Հանձնաժողովը մասնակից-պետության ուշադրությունը դարձնում է Դուրբանյան գործընթացի վերանայման հարցով Գիտաժողովի հետ կապված հետագա միջոցառումների մասին իր ընդհանուր № 33 (2009) հանձնարարականի վրա:

19. Հանձնաժողովը խորհուրդ է տալիս մասնակից-պետությանը անցկացնել և լայնորեն լուսաբանել Գերագույն Ասամբլեայի կողմից 2009 թվականի դեկտեմբերի 18-ի 64/169 իր բանաձևում հռչակված 2011 թվականը-աֆրիկյան ծագմամբ անձանց Միջազգային տարվան նվիրված հատուկ միջոցառումների համալիրը:

20. Հաշվի առնելով մարդու բոլոր իրավունքների անքակտելիությունը՝ Հանձնաժողովը մասնակից-պետությանն առաջարկում է դիտարկել մարդու իրավունքների գծով այն միջազգային պայմանագրերի վավերացման հնարավորությունը, որոնց մասնակիցը դեռևս չի հանդիսանում, մասնավորապես՝ պայմանագրերի, որոնց դրությունն անմիջականորեն վերաբերում է ռասսայական խտրականության խնդրին, այնպիսին, ինչպես բոլոր աշխատավոր ներգաղթյալների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին 1990 թվականի Միջազգային համաժողովը:

21. Հանձնաժողովը մասնակից-պետությանն առաջարկում է վերանայել անհատական բողոքներ ընդունելու և դիտարկելու Հանձնաժողովին իրավասու ճանաչելու մասին Համաժողովի 14 հոդվածում նախատեսված ընտրովի հայտարարություն անելու հարցը:

22. Հանձնաժողովն առաջարկում է մասնակից-պետությանը վավերացնել 1992 թվականի հունվարի 15-ին Համաժողովի մասնակից-պետությունների տասնչորսերորդ նիստի ժամանակ ընդունված և Գլխավոր Ասամբլեայի 1992 թվականի դեկտեմբերի 16-ի 47/111 բանաձևի մեջ հաստատված Համաժողովի 8 հոդվածի 6 կետի ուղղումները: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը, հղում անելով Գլխավոր Ասամբլեայի 61/148 և 63/243 բանաձևերի վրա, որոնցում Գլխավոր Ասամբլեան ամենաիրական կերպով կոչ է արել մասնակից-պետություններին արագացնել Հանձնաժողովի ֆինանսավորմանը վերաբերող Կոնվենցիայի այդ ուղղումների վավերացման իրենց ներքին գործընթացները և գրավոր ձևով օպերատիվ կերպով տեղեկացնել Գլխավոր քարտուղարին փոփոխության հետ իր համաձայնության մասին:

23. Մասնակից-պետությանը հաջորդ պարբերական զեկույցի պատրաստման և Կոմիտեի առաջարկների կատարման կապակցությամբ Հանձնաժողովն առաջարկում է շարունակել խորհրդակցությունները և ընդլայնել մարդու իրավունքների պաշտպանության, մասնավորապես ռասայական խտրականության դեմ պայքարի ոլորտում աշխատող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ երկխոսությունը:

24. Հանձնաժողովը խորհուրդ է տալիս մասնակից-պետությանը ապահովել իր հաշվետվությունների ներկայացման պահին հասարակության համար դրանց առկայությունն ու մատչելիությունը, և այդ հաշվետվությունների նկատմամբ Կոմիտեի դիտողությունների հրապարակումը պաշտոնական լեզվով և համապատասխան դեպքերում այլ լայն կիրառում ունեցող լեզուներով:

25. Նշելով, որ մասնակից-պետությունը 1995 թվականին ներկայացրել է իր բազային փաստաթուղթը, Հանձնաժողովը մասնակից-պետությանը խորհուրդ է տալիս ներկայացնել դրա թարմացված տարբերակը համաձայն մարդու իրավունքների մասին միջազգային փասթաթղթերի զեկույցների ներկայացման համաձայնեցված ուղեցույց սկզբունքների, մասնավորապես ընդհանուր բազային փաստաթղթի նախապատրաստման ուղեցույց սկզբունքների հետ, որոնք ընդունվել են 2006 թվականի հունիսին մարդու իրավունքների հարցերով պայմանագրային մարմինների հինգերորդ միջհանձնաժողովային խորհրդակցության ժամանակ (HRI/MC/2006/3):

26. Համագումարի 9 հոդվածի 1 կետի և Հանձնաժողովի ընթացակարգի կանոնների 65 կանոնի համապատասխանությամբ դրանցում ուղղումներ մտցնելով՝ Հանձնաժողովը խնդրում է մասնակից-պետությանը ներկայիս վերջնական դիտողությունների ընդունման պահից

մեկ տարվա ընթացքում 13, 14 և 17 ու բարձր կետերում շարադրված առաջարկությունների կատարման հետագա միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել:

27. Հանձնաժողովը նաև ցանկանում է մասնակից-պետության ուշադրությունը հրավիրել 8, 9, 12, 15 կետերում շարադրված առաջարկությունների չափազանց կարևորության վրա և մասնակից-պետությանը առաջարկում է իր հաջորդ պարբերական զեկույցի մեջ տվյալ առաջարկությունների կատարման արդյունքում ընդունված կոնկրետ միջոցառումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ներկայացնել:

28. Հանձնաժողովը մասնակից-պետությանն առաջարկում է 2014 թվականի հուլիսի 23-ին ներկայացման ենթակա իր յոթից մինչև տասնմեկ պարբերական զեկույցները ներկայացնել մի փաստաթղթով՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից իր յոթանասունմեկերորդ նիստի ժամանակ (CERD/C/2007/1) ՌԽՎՀ-ի համար ընդունված փաստաթղթերի պատրաստման ուղեցույց սկզբունքները և դրանում դիտարկել այս վերջնական դիտողություններում շոշափված բոլոր հարցերը: Նշելով, որ հինգերորդ և վեցերորդ միավորված զեկույցները ներկայացվել են վեցամյա ուշացմամբ՝ Հանձնաժողովը մասնակից-պետությանն առաջարկում է ապագայում պահպանել իր զեկույցների ներկայացման համար սահմանված ժամկետները: Հանձնաժողովը նաև վճռականորեն կոչ է անում մասնակից-պետությանը պահպանել զեկույցների ծավալի սահմանափակումները՝ 40 էջ կոնկրետ պայմանագրերի, իսկ ընդհանուր բազային փաստաթղթի համար՝ 60-80 էջ (տես HRI/GEN/2/Rev.6, կետ 19 փաստաթղթի մեջ պարունակվող զեկույցների ներկայացման ուղենիշ համաձայնեցված սկզբունքները):